№ 288 ՇԱԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28 1902 ՇԱԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28 № 288

ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

(31-Դ ՏԱՐԻ)

ԱՌԱՋԻԿԱԾ **1903** ԹՒԱԿԱՆԻՆ

«ՄՇԱԿԸ» ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՆՈՑՆ ՊՐՕԳՐԱՄՈՎ ԵՒ ՆՈՑՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

ամեն օր, բացի տօներին յաջորդող օրերից.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տան եւ մէկ ամսվանը նոյնպէս 10 ռ., տան ամսվանը՝ 9 ռ., ինն եւ 8 ամսվանը՝ 8 ռ., եօթ եւ վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը՝ 2 ռ. եւ մի ամսվանը՝ 1 ռուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բազարնայա եւ Բարօնսկայա փողոցների անկիւն), իսկ ԲԱԳԻՈՒՄ—Ն. Դաւթեանի մօտ։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար եւ առհասարակ նամակներ եւ ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հերթական հարց.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Երեսուն տարի. Նամակ Փօթիից. Նամակ Խմբագրութեան։ Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Չէ մեռնում.

ՀԵՐԹԱԿԱՆ ՄԻ ՀԱՐՑ

Այլ ևս կասկած չէ կարող լինել, որ մենք այնքան ընտելացանք մամուլին և գրքին, որ առանց նրանց անկարող կը լինենք երևակայել մեր հանրային կեանքը։

ճիշդ է, մամուլի և գրքի խօսքը դեռ ևս ժողովրդի մեծամասնութեան սեփականութիւն չէ դարձել, դեռ նա փոքրամասնութեան մէջ է տարածված, բայց արդէն գրաւել է այն շրջանները, որոնք ունեն ղեկավարող նշանակութիւն, որոնք սովոր են խորհել, մտածել հասարակական երևոյթների մասին և տալ հանրային բարոյական կեանքին այս կամ այն ուղղութիւնը։ Մամուլը և գիրքը որոշ չափով արդէն հաստատ կենսական պահանջ են դարձել։

Սակայն որպէս զի այդ պահանջը կանոնաւոր և ապահով կերպով բաւարարութիւն ստանայ, անհրաժեշտ է, որ այն անձինք, որոնք նուիրված են գրական խօսքի արտադրութեանը, որոնք կազմում են գրքեր և գրում են յօդուածներ մամուլի մէջ, կարող լինեն այնպէս վարձատրվել, որ այդ աշխատանքով լիութիւն տան իրանց կենսական առօրեայ պէտքերին և ստիպված չը լինեն նայել գրական աշխատանքի վրա իբրև մի երկրորդական և երրորդական գործի վրա, որը կարելի է կատարել, երբ կը մնայ բաւականաչափ ազատ ժամանակ գլխաւոր պաշտօնը վարելուց յետոյ։

Ժամանակ է, որ գրքեր և թերթեր հրատարակողները յոյս չը կապեն ձրի աշխատանքի վրա և միջոցներ ձեռք առնեն վարձատրելու գրական մշակութիւնը և այդ վարձատրութեամբ կարողութիւն տալու մարդկանց գլխովին նուիրվել գրական գործին, մի հիմնական հոգս ունենալով, որ գրական արդիւնաբերութիւնը լինի բեղմնաւոր և արդիւնաւէտ։

Ճիշդ է՝ ներկայումս արդէն գոյութիւն ունեն անձինք, որոնք ապրում են իրանց գրական աշխատանքով, կամ որոնց գրական գործը ստանում է որոշ դրամական գնահատութիւն, սակայն այդպիսի անձանց թիւը շատ սահմանափակ է և մեր գրականութիւնը դեռ այն վիճակի մէջ է, որ նա պահանջում է գրական գործողներից մի շարք զոհեր և զրկանքներ։ Ուրիշ երկիրներում գիրքը տարածվում է այնպիսի մեծ քանակութեամբ, պարբերական մամուլի թերթերը հրատարակվում են այնպիսի մեծ թւով, որ դարձնում են գրական ձեռնարկութիւնները առհասարակ շահաւէտ, իսկ որոշ դէպքերում նոյն իսկ բացառիկ կերպով մեծահարուստ մի գործ։ Այնտեղ կարողութիւն կայ և հրատարակչական գործը ընդարձակելու ու կատարելագործելու և գրական գործողներին առատօրէն վարձատրելու։ Իսկ մեզանում թէ գրքի տպագրութիւնը և թէ պարբերական մամուլի հրատարակութիւնը նոր-նոր դուրս են գալիս իրանց սաղմնային վիճակից և քայլեր են անում ներկայանալ, իբրև ապահով և ինքն իրանով բաւականացող մի ձեռնարկութիւն։

Եթէ գիրքը և մամուլը կարևոր մտաւոր և բարոյական պահանջ են մեզ համար, ուրեմն և միջոցներ պէտք է ձեռք առնել բարւոքելու գրական աշխատանքը և նրան տալու նոյն պատկառելի դիրքը, որ նա ունի մեզանից աւելի առաջ գնացած երկիրներում։ Դա հերթական կարեւոր հարցերից մէկն է մեզանում։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՐԵՍՈՒՆ ՏԱՐԻ

—

Թւաբանական ճիշդ հաշիւը ասում է, որ 1872 թւից մինչև 1902 թ. անցել է երեսուն, ուղիղ երեք տասնեակ տարի։ Քիչ ժամանակամիջոց չէ այդ. դա մի կեանք է, մի շրջան է, որի ընթացքում ինչ ասէք, որ չէ կարելի անել։

Եւ տիկին Սիրանուշը օգտաւէտ է դարձրել ամենահրաշալի կերպով. երեսուն տարի է, ինչ նա ծառայում է բեմին, երեսուն երկար ու ձիգ տարիներ նա միշտ յատակից 1—2 արշին բարձր կանգնած մեզ քարոզել է բարիի, սիրոյ, գեղեցկի գաղափարը, մեզ համար պատկերացրել է չարի, վատի, վնասակարի բոլոր ելևէջները իր այս կամ այն հետևանքներով։ Գրել է ընդունակ կամ անընդունակ հեղինակ, ստեղծագործել է տաղանդաւոր կամ հանճարեղ ստող, թարգմանել է շնորհով կամ անշնորհք թարգմանիչ,—նա միշտ մի և նոյն ոգևորութեամբ, եռանդով, նոյն կրակի կայծով մեզ ներկայացրել է այդ ստեղծագործութիւնների բովանդակութիւնը, այլ կերպ նա պատկերացրել է մեր առջև հասարակական, մարդկային կեանքը իր բարդ ու բազմակողմանի ծալքերով, մեզ տրամադրել, թեքել է դէպի այս կամ այն իրողութիւնը, երևոյթը։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՉԷ ՄԵՌՆՈՒՄ

—

Այդեստանի արժանապատիւ հայրերը չորս ամիս է արդէն, ինչ հանգիստ քուն, հալալ հաց ու ջուր չունեն։ Երկար ու ձիգ սպասողական դրութիւնից նրանք հալ ու մաշ են եղել բառիս բուն մտքով. նրանց պէս միշտ խաղաղ, հոգով ու սրտով հեզ, անվրդով, պարզ ասած, քնաւ մարդիկը սատիկ դիւրագրգիռ, խիստ ջղային են դարձել։ Նրանց առօրեայ բառարանի մէջ այդպիսով մուտք են գործել «ջղեր, ներվեր, ջղային» բառերը, որոնց գոյութեան մասին մի քանի ամիս առաջ նրանք ամենամութ հասկացողութիւն անգամ չունէին։

Ի՞նչ է պատճառը, տարերային ինչ ոյժ է այդպէս կերպարանափոխել քնի աշխարհի այդ հարազատ զաւակներին։

Հիւանդացել է քաղաքի ամենախոշոր հարուստը, իննսունամեայ մահտեսի Սարգիսը։

Արդէն չորս ամիս է, ինչ նա տանջվում է ծանր հիւանդութեան ճանկերում։ Խեղճը անկողին մտաւ հէնց այն օրը, երբ դիպլոմաւոր փեսան նրա թոռան հետ տարաւ, իր առելով, վէր խփեց, մօտ ութսուն հազար ռուբլի. թէ մահտեսու և թէ ևս առաւել դիպլոմաւոր հերոսի սիրոյ այդ չքնաղ առարկան, ութսուն հազարը, մի այնպիսի ծանր հարուած հասցրեց առաջինին իր չքացմամբ, որ խեղճը, եթէ չը լինէր բժշկական օգնութիւնը, իսկոյն և եթէ կը դնար ուր հարկն է, կը հեռանար ընդ միշտ այս մեղսալի աշխարհից։ Բայց նա այդ եղերական, տանջանք հազարների անակնկալ կորստեան օրը չը մեռաւ. նա ապրում է ու տանջվում. բժիշկները կարծես դիտմամբ երկարացնում են նրա կեանքը, որ նա աւելի տանջվի իր կորստի մեծութեան առաջ, նա, որ երկար տարիների ընթացքում օրը հազար անգամ երդվելով, սուրբերի անունները անընդհատ յիշելով, նրանց ականջներում գիշեր-ցերեկ զուռնա փչելով, փող է դիզել, փող է պաչտել, նրա շնորհով հաչտվել է վաղուց ձախակողմեան դասը գնալու մտքի հետ, իր աչքով տեսաւ շատ հազարների չքանալը,—ինչպէս կարող է հանգստանալ, ինչպէս կարող է չը տանջվել։

Բայց նա միայնակ չէ տանջվում. նրանից աւել տանջվում են նրանք, որոնք վաղուց ի վեր աչք ունեն մնկած նրա թաղման վրա, որոնց համար այդ թաղումը մի մեծ տօնախմբութիւն, մի կատարեալ հարսանիք է լինելու։

Վերջին ժամանակներս հարուստները մի առանձին չքով են իրանց թաղել տալիս. ոչ միայն հարիւրներ, այլ հազարներ անգամ չեն խնայում իրանց այն աշխարհը ղրկող քահանաներից, որոնք, հազարներ կորզելով իրանց ճանկն ընկած մերձիմահ զոհից, հաստատ, «ազնիւ», խօսք են տալիս անպատճառ աջակողմեան դասն ուղարկել նրանց ու այդպիսով փրկել նրանց բազմամեղ հոգին դժոխքի յաւիտենական կրակից։ Այն հանդգնությունն է տիրում հիմա, որ քանի քահանային տրվող վարձը մեծ լինի, այնքան շուտ մեղքերով ծանրաբեռնված հոգին կը հասնի աջակողմեան դասը. հազարները շատ զգալի կերպով թեթևացնում են խեղճ հոգու անտանելի բեռը. հինգ-վեց հազար կանխիկ ու միանուագ վճարած հոգին, օրինակ, բոպէապէս տեղ է հասնում ու, մաքրված իր բոլոր մեղքերից, փայլում այնտեղ յաւիտենական անչէջ լուսով։

Մահտեսի Սարգիսը անցաւոր աշխարհին իր վերջին հրաժեշտը տալու բոպէին կը ցանկանայ անշուշտ իր հոգին այդպէս երջանկացնել յաւերժ, ազատվել նրան սպասող ձախակողմից, փայլել աջակողմում, ուստի հազարները դուրս կը գան ասպարէզ այդ գործը գլուխ բերելու համար։ Զուր չեն քնահարամ լինում խեղճ տէրտէրները, զուր չեն օրը տասն անգամ ակը տալ գնում մահտեսի Սարգսին, զուր չեն իրար հանդիպելիս լուռ խորհրդաւոր հարցական հայեացքներ ուղղում իրար երեսի, զուր չեն ամեն քայլափոխում տեղեկութիւններ հարցնում սրանից-նրանից նրա հիւանդութեան ընթացքի մասին։ Եթէ մահտեսուն բժշկող բժիշկները նրա հիւանդութեան առաջին օրից առանձին թերթիկների վրա տպած պաշտօնական բիւլետիններ հրատարակէին օրը մի քանի անգամ և իրանց պացիենտի հիւանդութեամբ խիստ հետաքրքրվող քահանաների վրա վճռեէին որ և է բարեգործական նպատակով, մի խոշոր գումար կը լինէին կազմած ուէգոիզմինուիրական վայր Այդեստանը ծննդեան տօներին մի քիչ գոնէ պարզերես կը լինէր որ և է բարեգործութեամբ։

Խեղճ բարեկրօնները ամեն օր իրար հետաքրքրում են լինում, իրար խստօրէն հսկում են, անձամբ կամ հաւատարիմ մարդկանց միջոցով. իւրաքանչիւրը աշխատում է միմիայն ինքը ներկայ լինել մահտեսու վերջին րոպէներին, ինքը խոստովանել, հաղորդել նրան, թողութիւն տալ նրա մեղքերին և այդպիսով հանրահռչակ աէր-Իգիթի պէս մի կարգին բան վեր խփելուց յետոյ, երկնային արքայութեան դրռները նրա առաջը բանալ ու ասել՝ «գնա, մահտեսի, գնա, ա գլխամեռ, ուղղակի աջակողմեան դասը ու յիշիր այնտեղ միշտ, որ այս լաւութիւնը քեզ արի եմ»։

Այս չորս ամվայ ընթացքում քանի քանի անգամ են լուրեր տարածել, թէ մահտեսին չը կայ այլ ևս, բանի քանի անգամ են այդպիսով սարսափահար արել խեղճ քահանաներին. իւրաքանչիւրը նրանցից կարծել է, թէ որսը ձեռքից գնաց, աւելի զգաստի, աչքաբացի և և ճարպիկի ճանկն ընկաւ. շատերը բան ու գործ թողել են ու մահտեսանց տունը վազել, որ հազուց ասեն, թաղողների թւում գրվեն և այդպիսով մասնակից լինեն ընդհանուր խնճոյքին. քաղաքի դպրոցների կրօնուսոյցները քանի քանի անգամ սուտ տկար ձևանալով թողել են դասերը, կամ դասամիջոցներում են վազել անձամբ ստուգելու չարաբաստիկ լուրը։

Տէր-Մարտիրոսը արդէն սովորութիւն է դարձրել իր համար դպրոց գնալուց առաջ հաստատ աղբիւրից լուր առնել մահտեսու հիւանդութեան ընթացքի մասին և յետոյ միայն ուղղել իր քայլերն ուսումնարան։ Այնտեղ էլ նա հանգիստ սրտով չէ կարողանում պարապել. բոլոր ժամանակ նրա ուշն ու միտքը ուղղված են դէպի հիւանդ մահտեսին։ Մի օր տէր-Մարտիրոսը քիչ մնաց թէ դասը կիսատ թողնէր ու դուրս վազէր դասատնից մահտեսուն ձեռքից չը գցելու համար. բանը նրանումն է, որ չորրորդ դասատանը դասի ժամանակ դարձնելով իր հայեացքը վերջին նստարանները, որոնցից մինի վրա նստած էր մահտեսի Սարգսի թոռը, տեսաւ նրան լաց լինելիս. կարծեց թէ նրա խեղճ պապը մեռել է. ցատկեց տեղից, քիչ մնաց, թէ դուրս նետվի դասարանից առանց աշակերտներին մի բան ասելու. բայց խելքի եկաւ ու հարցրեց մահտեսու թոռան.

—Արմենակ, հոգիս, ինչո՞ւ ես լաց լինում. ինչ է պատահել։

Պապի անունը չը յիշեց, վախենալով աւելի վշտացնել Արմենակին։ Վերջինս ոչինչ չը պատասխանեց. ընկերները նրա փոխարէն պատասխանեցին, որ Արմենակը թուաբանութիւնից երկու է ստացել ու այդ պատճառով է լաց լինում։

—Փառք Աստուծու,—ասաց իր մտքում տէր

Լրանում է այս տարի այդ բեղմնաւոր աշխատաւորի գործունէութեան երեսուն տարին։ Ճակատագիրը, ոչ մարդկային, այլ հայ գործիչի ճակատագիրը տնօրինել էր, որ այդ երեսուն տարվայ գագաթին վիրաւորանք հասցնէին այդպիսի մի գործիչի, որ այդ երեսուն տարվայ վերջալոյսին զրկէին բեմից և վիրաւորական ակնարկներ անէին նրա մասին։ Այդպէս եղել է, այդպէս էլ պիտի լինի։ Ում ինչ փոյթ, թէ չէ կարելի վիրաւորել այդքան երկար ժամանակ մի նուիրական գաղափարի պաշտօնեային, ում ինչ գործ, թէ երեսուն տարի բեմի, այն էլ հայկական բեմի վրա գործելը— դա մի ամբողջ նահատակութիւն է։

Շատ երկար կը տանէր մեզ, եթէ մենք մանրամասն կանգ առնէինք բեմական այդպիսի մի հսկայ գործունէութեան պատմութեան վրա. դա թէ մեր այժից վեր է և թէ մեր այս յօդուածի նպատակից դուրս։ Մեր ցանկութիւնն էր արձանագրել իրողութիւնը, մեր նպատակն է ասել մեր հասարակութեանը, որ այս տարի է լրանում մեր բոլորիս սիրելի տիկին Սիրանոյշի բեմական գործունէութեան երեսուն տարին։ Անկասկած, գիտէ այդ հասարակութիւնը, որ այդ գործունէութեան ասպարէզն էլ, ինչպէս նաև մեր միւս հասարակական գործունէութեան ասպարէզները,— միլիթարական ոչինչ չէ ներկայացնում։ Եթէ բեմական գործունէութիւնը կարող է մի բանով բացառութիւն կազմել,—դա այն է, որ նրա վիճակը միշտ եղել է և է աւելի վատթար. Ամիրիկեանի, Ադամեանի և միւսների պատմութիւնը մեզ օրինակ և ապացոյց։ Մենք աւելի քան անողոք ենք եղել դէպի այդ գործիչները. քաղցած են եղել, թէ կուշտ, ուրախ թէ տխուր, հոգեկան խաղաղ թէ ալեկոծ տրամադրութեան մէջ,—նրանք միշտ բեմ են դուրս եկել իրանց պարտքը կատարելու, նրանք ծիծաղել են ամենատխուր տրամադրութեան մէջ, նրանք լացել են ուրախ ժամանակ —այդպէս է պահանջել հասարակութիւնը։

Եւ այդ հասարակութեան վրա պարտք կայ տյոօր ուշադրութեան առնելու այդպիսի բազմաչարչար աշխատաւորի գործունէութիւնը, այլ ոչ սպասելու նրա մահվան, որ փառաւորապէս թաղէ։

Գէթ մի անդրանիկ օրինակ ցոյց տանք մեր պարտաճանաչութեան, գէթ մէկ անգամ օրինաւոր կերպով կատարենք մեր պարտքը։

Ռ. Յովհաննիսեան

Բ ա գ ո ւ.

ՆԱՄԱԿ ՓՕԹԻՒՑ

—

Դեկտեմբերի 17-ին

Ամսիս 20-ին մեզանում տեղի ունեցաւ մի յանդուգն աւազակութիւն։ Ցերեկվայ ժամը 12-ին, քաղաքի կենտրոնում կողոպտեցին արքունական գանձարանը, տանելով 30,000 ր.։ Զարագործները թաւով վեց հոգի են եղել, գուրիացիների հագուստով, լաւ զինված բերդան հրացաններով, ատրճանակներով և դաշոյններով, իսկ կասկածանքի չենթարկվելու համար, փաթաթված են եղել ցնցոտիների մէջ։ Նախ քան ներս խուժելը, նրանք դէն են գցում իրանց վրայից ցնցոտիները կօրրիդօրում և յանկարծ ներս թափվում ու սկսում հրացաններ արձակել։ Մի ակնթարթում սարսափելի չփոթութիւն է տիրում. ծառայողներից ոմանք փախչում են, ոմանք մտնում են սեղանների տակը, կամ պառկում են յատակի վրա, որպէս զի գնդակահար չը լինեն։ Այդ օրը բաւական մասնաւոր մարդիկ էլ են լինում, նրանք էլ ենթարկվում են նոյն վիճակին։ Միմիայն գանձապետ պ. Վարդապետեանն է լինում, որ մի կողմից պաշտպանողական դիրք բռնելով, միւս կողմից կամենալով փողի արկղը ազատել, պառկում է նրա վրա, բայց աւազակները խրփելով նրա շինքին՝ գցում են միւս սենեակը, վերցնում փողերը և հեռանում։

Հրացանների ձայնի վրա սկսում են հաւաքվել թէ ամբոխը և թէ մէկ ոստիկան (գօրօդօվոյ) ճիշդ այն ժամանակ, երբ աւազակները փողերը վերցրած սանդուղքներից իջնելիս են լինում։ Ոստիկանը խսկոյն մտնում է դարան, երբ աւազակները դուրս են գալիս փողոց, սանդուղքների եռևից ատրճանակի հարուածով տեղն ու տեղը գլորում է չարագործներից մէկին, իսկ միւսին վիրաւորում։ Զը նայած դրան, աւազակները վերցնում են սպանված ընկերոջ զէնքերը, վիրաւորվածին սպանում և այնպէս հեռանում։

ՔուԹայիսի նահանգապետը անձամբ եկել էր Փօթի քննութիւն կատարելու և խիստ կերպով պատուիրել է ամեն միջոց ձեռք առնել աւազակներին կալանաւորելու. մինչև օրս ոչ մի լուր չը կայ։

Փօթիում այս տեսակ յարձակումները շատ յաճախ են պատահում և միշտ էլ մնում են անպատիժ։ Մի քանի ամիս սրանից առաջ կողոպտեցին «Նադեժդա» ընկերութեան ագենտ պ. Բաժբէուկովին, հացնելով խեղճի գլխին ծանր վէրք և կասսայից տանելով մօտ 2,000 ռուբլի։ Այս դէպքն էլ երեկոյեան ժամը 5-ին պատահեց, երբ փողոցներում դեռ անց ու դարձը չէր դադարել։ Մինչև օրս էլ չարագործները մնացին անյայտ։

Ա. Վրթանէսեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Նոր-Բայազէտ, դեկտեմբերի 22-ին

«Մշակի» № 271-ում տպված լուրը, որ վերաբերում է մեր հարևան Ղուլալի գիւղում մի կնոջ իբր կենդանի թաղելուն՝ մեծ իրարանցում է առաջ բերել և պղտորել ազգաբնակութեան մտքերը։ Եւ որովհետև լուրը սկզբից մինչև վերջ սխալ է, նոյն իսկ պօլիցիան հարց ու փորձի է ենթարկել գիւղի տանուտէրին, մեռել թաղող քահանային և հասարակութեան գլխաւորին,—ես նկատի ունենալով, որ այդ լուրը տպված է «Մշակում» որ շատ մեծ ժողովրդականութիւն է վայելում գիւղական հասարակութեան մէջ,—ցանկանում եմ լուսաբանել այդ մռայլ անցքը, մանաւանդ որ շատերը ինձ են վերագրում, իբրև «Մշակի» թղթակցի։

Շատ ցաւալի է, որ այդ գիւղի մարդիկ մոլորեցրել են թղթակցին, կեղծ լուր հաղորդելով նրան, իսկ «Մշակի» խմբագրութիւնը՝ հաւատ ընծայելով թղթակցին՝ տպագրել է այդ սուտ լուրը։ Սակայն այդ մութ իրադիրը պարզելու համար ես մի քանի անգամ տեղեկութիւն հաւաքելով Ղուլալի գիւղի մի քանի մարդկանցից՝ եկայ հետևեալ եզրակացութեան։

Նախ և առաջ պէտք է յիշեմ, որ Ղուլալիի գիւղականները մի մարդու սպանութեան պատճառով բաժանված են երկու հակառակ կուսակցութիւնների, որոնք գուցէ ոչ մի միջոց չեն խնայում միմեանց դէմ ինտրիգներ լարելու։ Նոյեմբերի սկզբին մի ջահիլ կին է վախճանվում այդ գիւղում. թաղում են նրան իբրև սովորական մեռել՝ առանց մի որ և է միջնադէպքի։ Այդ միջոցին յիշեալ կնոջ թաղող քահանայի որդին մի նշանված աղջիկ է փախցնում իր հարևանից. տէր հայրը համակրում է այդ մտքին՝ և պահում է իր տղային։ Իսկ հարսնացուի նախկին նշանածի կուսակցութեան մարդիկ՝ քինախնդրութեամբ լցված՝ աշխատում են մի կերպ վնասել, վրէժխնդիր լինել իրանց ախոյեանից, յատկապէս մեռել թաղող քահանայից, որի տղան յանդգնել է փախցնել—տանել իրանց նշանադրած հարսնացուին։ Եւ ահա տարածում են այդ չինծու լուրը, իբր թէ այդ քահանան «կենդանի մեռել է թաղել»։ Ահա այդ անցքի կարճառօտ պատմութիւնը։ Եւ միթէ կարիք կայ յիշելու, որ գիւղական կուսակցութիւնները ինչեր չեն «սարքում» միմեանց վնասելու համար...

Կոան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Այսօր, շաբաթ, դեկտեմբերի 28-ին, երեկոյեան 8 ժամին, Թիֆլիսի նահանգապետի բնակարանում տեղի կունենայ երկրաշարժից վնասվածներին օգնող գլխաւոր կոմիտէի նիստը՝ քննելու մնացած խնդիրները։ Այդ նիստը կոմիտէի վերջին նիստն է։

—

Այսօր, շաբաթ, դեկտեմբերի 28-ին, Թիֆլիսի Ծողովարանում կը կայանայ Թիֆլիսի Հայոց Բարեգործական ընկերութեան կազմած պարահանդէսը։

—

Առաջիկայ տօներին չքաւորներին բաժանելու համար ստացանք պ. Մ. Շահնազարեանից 5 ռուբլի։

—

Պետերբուրգից ստացանք հետևեալ հեռագիրը. «Ցայտնում ենք մեր անկեղծ ցաւակցութիւնը վաղամեռիկ Վահան Նալբանդեանի մահվան առիթով։ Ամսիս 22-ին հոգեհանգիստ կատարվեց նրա յիշատակին։ Հայ ուսանողներ»։

—

Ներքին գործերի մինիստրութեան մէջ հարց է բարձրացրած իրաւունք տալու քաղաքային հասարակական ինքնավարութիւններին բնակարանից հարկ վերցնել քաղաքացիներից՝ այն պայմանով միայն, որ քաղաքային վարչութիւնների օգտին վերցրած հարկը չը կազմէ աւելի քակ պետական գանձարանի օգտին վերցնվող հարկի 25%-ը։

—

«Петерб. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ դեկտեմբերի 19-ին Պետերբուրգում, պրոֆէսսոր բարօն Վ. Ռ. Ռոզէնի նախագահութեամբ, կայացաւ արևելեան Կայսերական ռուսաց հնագիտական ընկերութեան հնագիտական բաժանմունքի անդամների նիստը։ Նիստի պրոգրամը կազմում էին հետևեալ զեկուցումները. Գ. Ադոնցի—«Վասակը և հայկական շարժումը V-դ դարում» և Է. Լէնցի—«Կնճռձև յատակ ունեցող կաւէ ամանների մասին, որոնք գտնվում էն մահմեդական Արևելքի սահմաններում»։ Գ. Ադոնցը նոր հայեցակէտով է նայում V-դ դարի հայկական շարժման հերոս Վասակի վրա։ Է. Լէնց ցոյց տուեց մի քանի ամաններ կոնաձև յատակով։ Զեկուցանողը հակվում էր դէպի այն կարծիքը, որ այդ ամանները գործ էին ածվում անդիկը պահելու և փոխադրելու համար։

—

Ազատելով շատ քաղաքներ պօլիցիան պահելու և բանտային հիմնարկութիւնները տաքացնելու ծախսերից, ներքին գործերի մինիստրութիւնը խորհուրդ է տալիս նահանգապետներին վերոյիշեալ ծախսերից ազատված քաղաքների քաղաքային հասարակական վարչութիւնների քննութեանն առաջարկել քաղաքային լոմբարդներ հիմնելու հարցը, որոնք կազատէին չքաւոր ազգաբնակութիւնը փոխատու դրամարկղների կախումից։

—

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Դեկտեմբերի 22-ին մի խումբ երիտասարդների նախաձեռնութեամբ, տանջում բժշկութեամբ ու չեն թողնում հանգիստ մեռնի։ Մի օր առաւօտեան ժամից յետոյ իր դպրի հետ տէր-Բարսեղը գնաց մահտեսուն ակը տալու. խօսեց ըստ սովորականին բազմամեղ անցաւոր ու երանելի յաւիտենական աշխարհի մասին, կօնեակով հինգ բաժակ քաղցր թէյ խմեց, կօնեակի չիշում կենսատու հեղուկից տխուր յիշողութիւններ թողնելով միայն. յետոյ մի գինու բաժակ մաքուր կօնեակ խմեց թէյի գլխին, դատարկեց շիշը, ուշ չը դարձնելով բնաւ թէյ ածող հարսի բերանից բաւականին պարզ լսվող «գլուխդ հողեմ, էդքան կը լակե՞ն» դարձուածքին ու բռնօթի քաշելով դուրս գնաց մահտեսու տանից։ Մի քանի քայլ հազիւ հեռացած նա պատահեց փողոցում Ֆելդշէր Համբարձումին, որը գնում էր մահտեսու մօտ ինչ որ գործիքներ ձեռքին։

—Օրհնեա՛, տէր,—ասաց Համբարձումը տէր-Բարսեղին։

—Այ չօ՛ օրհնեա՛, տէր, ցաւ օրհնեա՛, տէր, —ասաց խիստ բարկացած տէրտէրը,—էդ ո՞ւր ես գնում. էդ ինչ սատանայի մաշին ա ձեռքիդ, բաւական չէ՞, ինչքան մարդին չարչարեցիք քօ դօխտուրն ու դու. հիմա ինչ ունես նրա մօտ։

—Գնում եմ մահտեսու աղիքները լուանալու. մաշինը նրա համար եմ տանում. բժիշկն էր պատուիրել,—պատասխանեց Ֆելդշէր Համբարձումը։

—Այ նա էլ ա գլուխը քարովը եկել, դու էլ,—ասաց տէր-Բարսեղը,—խեղճ մարդուն ինչո՞ւ էք չարչարում. թողէք հանգիստ հոգին աւանդի. տեսէք, տեսէք, ինչեր են հնարել. աղիքներ են լուանում. աղիքները լուանալով մահտեսի Սարգսին չէք լաւացնի դուք. էդ փողի իալակ էք սարքում, փող պոկելու համար։ Ես իսկի տարին մի անգամ գլուխս լուանում չեմ. ինչո՞ւ չի քօ դօխտուրը պատահած տեղն ասում՝ «ա՛ տէր, գլուխդ լուացի, մարտիրոսը,—կը նշանակէ մահտեսին դեռ չէ մեռել, կենդանի է ու տէր-Բարսեղի ճանկը չէ ընկել։

Տէր-Մարտիրոսը նստեց շարունակելու դասը. բայց վայ այն շարունակելուն. ամբողջ ժամանակ մահտեսին նրա մտքից չէր գնում. բանն այնտեղ հասաւ, որ մի-երկու անգամ, տասը պատուիրանքների մասին խօսելիս, Մովսէս մարգարէին մահտեսի Մովսէս ասաց։

Նոյն վիճակի մէջ են գտնվում նրա կարգակիցներն ու պաշտօնակիցները ուրիշ դպրոցներում ու յաճախ Պօղոս առաքեալը, Յովհան մարգարէն կամ Մեսրոպ Մաշտոցը անգիտակցաբար մկրտվում են մահտեսի Պօղոս, մահտեսի Յովհան ու մահտեսի Մեսրոպ անուններով...

—Հմայակ, պատմիր, ինչպէս մահտեսի Յովհանը ձկան փորում երեք օր ու երեք գիշեր մնաց,—հարցնում է դպրոցներից մինում կրօնուսոյցը աշակերտին։

—Ա՛ տէր, էդ սովորել չենք,—պատասխանում է աշակերտը։

—Ոնց չէք սովորել, փուչ կենդանի. մի լաւ մտածի, կը մտաբերես։

—Յովհան մարգարէն ձկան փորումը պատմեմ, ա՛ տէր,—մտաբերում ու հարցնում է աշակերտը։

—Այո՛, այո. Յովհան մարգարէն ձկան փորումը պատմիր։ Ես չփոթմամբ նրան մահտեսի ասացի թէ չէ, իսկոյն դու ամեն բան մոռացար. էդ էնց կը սովորեն, անպիտան։

Աշակերտը Յովհանին մահտեսուց կրկին մարգարէ դարձնելով հարիւրերորդ անգամ սկսում է պատմել նրա հետ պատահած հրաշագործ դէպքի մասին։

Բոլոր քահանաներից շատ հետաքրքրվում է մահտեսի Սարգսի հիւանդութեամբ ու յուզվում է նրա մասին տարածվող լուրերից նրա ծխական քահանայ տէր-Բարսեղը։ Նա մի ձէնի ասում է, որ խեղճ մարդուն դուր են չարչարում, տանջում բժշկութեամբ ու չեն թողնում հանգիստ մեռնի։ Մի օր առաւօտեան ժամից յետոյ իր դպրի հետ տէր-Բարսեղը գնաց մահտեսուն ակը տալու. խօսեց ըստ սովորականին բազմամեղ անցաւոր ու երանելի յաւիտենական աշխարհի մասին, կօնեակով հինգ բաժակ քաղցր թէյ խմեց, կօնեակի չիշում կենսատու հեղուկից տխուր յիշողութիւններ թողնելով միայն. յետոյ մի գինու բաժակ մաքուր կօնեակ խմեց թէյի գլխին, դատարկեց շիշը, ուշ չը դարձնելով բնաւ թէյ ածող հարսի բերանից բաւականին պարզ լսվող «գլուխդ հողեմ, էդքան կը լակե՞ն» դարձուածքին ու բռնօթի քաշելով դուրս գնաց մահտեսու տանից։ Մի քանի քայլ հազիւ հեռացած նա պատահեց փողոցում Ֆելդշէր Համբարձումին, որը գնում էր մահտեսու մօտ ինչ որ գործիքներ ձեռքին։

—Օրհնեա՛, տէր,—ասաց Համբարձումը տէր-Բարսեղին։

—Այ չօ՛ օրհնեա՛, տէր, ցաւ օրհնեա՛, տէր, —ասաց խիստ բարկացած տէրտէրը,—էդ ո՞ւր ես գնում. էդ ինչ սատանայի մաշին ա ձեռքիդ, բաւական չէ՞, ինչքան մարդին չարչարեցիք քօ դօխտուրն ու դու. հիմա ինչ ունես նրա մօտ։

—Գնում եմ մահտեսու աղիքները լուանալու. մաշինը նրա համար եմ տանում. բժիշկն էր պատուիրել,—պատասխանեց Ֆելդշէր Համբարձումը։

—Այ նա էլ ա գլուխը քարովը եկել, դու էլ,—ասաց տէր-Բարսեղը,—խեղճ մարդուն ինչո՞ւ էք չարչարում. թողէք հանգիստ հոգին աւանդի. տեսէք, տեսէք, ինչեր են հնարել. աղիքներ են լուանում. աղիքները լուանալով մահտեսի Սարգսին չէք լաւացնի դուք. էդ փողի իալակ էք սարքում, փող պոկելու համար։ Ես իսկի տարին մի անգամ գլուխս լուանում չեմ. ինչո՞ւ չի քօ դօխտուրը պատահած տեղն ասում՝ «ա՛ տէր, գլուխդ լուացի, կը հիւանդանաս, կը մեռնես». ահա՛ էր օրհնվածը գիտում է, որ ինձանից փող չի դուրս գալ, էնդուր չասում. հիմա մչանքայ մահտեսի փողը բռլա, նրա աղիքներն անգամ լուանալ ա տալիս։

Ֆելդշէրը, տեսնելով, որ տէրտէրի մենախօսութիւնը վերջ չունի, թողեց նրան ու հեռացաւ։

Տէր-Բարսեղը շարունակեց առանց քաշվելու դուրս վիժել բժիշկների հասցէներով իր այրված սրտի ամբողջ ժահրը, հաստատ հաւատացած լինելով, որ իր ունկնդիր դպիրը բոլոր կէտերում համաձայն է իր հետ։

—Հիմիկս դօխտուրները թամամ Աստուծու պատիժ, պատուհաս են մեզ համար,—ասաց նա,—նրանք ադաթ ընկան թէ չէ, մեր հացը պակասեց, մենք աղքատացանք։ Մի քսան-երեսուն տարի առաջ շաբաթ չէր պատահում, որ երեք-չորս մեռել չը թաղեմ, հիմի ամիսը մինը եա ճարվում ա, եա ոչ. դօխտուրները պահում, բժշկում են հիւանդներին։ Հայ ողորմի քեզ, ֆերշիլ Բալաղայ, հա՛. մի ժամանակ մենակ նա էր մեր քաղաքի դօխտուրը. էն ա կէնտ երկու դեղ էր բանեցնում նա, սխտորն ու քացախը. առաջինն առհասարակ ուտացնում էր խորակի հետ, իսկ երկրորդն առհասարակ խմացնում, կամ ջանն էր քսում. եթէ սխտորն ազդում չէր, քացախն էր ներգործում, եթէ քացախը չէր ազդում, սխտորն էր ներգործում ու վերջի վերջոյ եա դէս էր կտրում, եա դէն. հիւանդը մեր խեղճ մահտեսու պէս չէր չարչարվում. եա էս աշխարհումն էր մնում, եա դէպի յաւիտենականը, երանելին էր գնում... Այդպիսով լուսահոգի Բալաղէն թէ իր բանն էր լաւ տանում, թէ մեր. ոտիս մինը հանգստարանի ճանապարհին էր կենում. երեքաչները իրար վրա կիտվում էին տանը... ժամանակիս էս լուսաւոր դօխտուրները հարիւր տարեկան մարդին անգամ թող չեն անում, որ հրեւտին ճանապարհվի... Ասենք երեխանց, ջահիլ-ջհուլին, երիտասարդներին բժշկելը լաւ բան ա, թող նրանց բժշկեն. մեծերի հետ ինչ գործ ունեն։ Եթէ ողորմածահոգի ֆերշիլ Բալաղի դօվրն ըլէր հիմա, եթէ մեր քաղաքում Ազունց տղի պէս ուստա դօխտուր չը լինէր, հմի ես մահտեսի Սարգսին տասն անգամ թաղել էի։ Ամէ էն գլխամեռին օրէս ետը պահում են ինչ անեն, նա նոր հօ թագաւորին սալդաթութիւն չի պիտի անի, կամ պակվիլ չի պիտի, տուն-տեղ դնի։ Ախ մեր Ազունց տղէն. նա դօխտուր դառաւ թէ չէ, հունձս պակասեց, շաբաթներով էլ մեռելի երես չեմ տեսնում, մի հիւանդի որ Ազունց տղէն բժշկել ա սկսում, նրանից ես ձեռք եմ վերցնում, նա իմ քիսից գնում ա ընդ միշտ։։ Ամա էլի օրհնվի մեր Ազունց տղէն, որ բաբաթ ոտից ծանրն ա, ամեն հիւանդի վրա էլ գնում չի, փողի թամահ չանում, փող չի սիրում աղբաթիխերը, դժուար ա տեղից շարժվում, թէ չէ, եթէ նա ամեն կանչելով հեչ-տութեամբ գնայ, ամեն հիւանդի էլ ընդունի, էլ մեր քաղաքում մեռնիլն ադաթ չի լինիլ, քահանաներս պէտք է գնանք այն ժամանակ ջուրը թափվենք... Ահա Աստուած բարի տայ մեր Մարութովին. թէպէպ դօխտուր ա, բարձր տեղերում կարդացել ա, ամա բաբաթ ֆերշիլ Բալաղի եօնին ա դուրուր գալիս, շարժվում. օրը եթէ հարիւր, երկու հարիւր հիւանդի համար էլ կանչեն, կը գնայ, ինչ գործ ասես յանձը կառնի, միայն թէ դաթից սև ու ապիտակ փող, դեղին ոսկի դուրս գայ... Օրհնվի մեր Մարութովը, շատ օրհնվի. էլի շատ ու քիչ նրա հիւանդներից ենք մենք շահվում, նա ա մեզ գործ տալիս...

Եւ տէրտէրը դեռ երկար շարունակում էր իր գանգատները...

Ստ. Տէր-Աւետիքեան

Գանձակ.

ՑԱՂԿԱԾՎՈՂՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՈՒՑ

ԺՈՂՈՎԵՆԱԳԻՐ «ՎԻՈՀՈՒ»

27 վերջդրդիկն

ԿԻՍԻՆԳԵՐՎԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒ ԿՈՄԻՏԵԻ ՈՒՂԵՐՁԸ

Ի՞նչ է ասում Աստվածաշունչը 24-րդ գլուխը։

Ուստի՝ դուք ևս պատրաստ եղեք, զի որում ժամն չեք գիտանիր, Որդին մարդու գալիս է։ Բայց եթե չարն ասի իր սրտում՝ Տիրոջս գալն հապարեցուցանի, և սկսանի զծեծել զընկերս իւր, և ուտել ընդ արբեցեալս, Տէրն այնմ օրի՝ զոր ոչ սակայնի, և ի ժամի զոր ոչ գիտանի, եկեսցի և զնա երկոցունս կտրեսցի, և զբաժին նորա դիցի ընդ ծածկաւորս։ Անդ լիցի լացմունք և կրճատումն ատամանց։

Ապա թագաւորութիւն երկնից նմանեսցի տասնեարց կուսանաց, որք առեալք զլամպարս իւրեանց, ելին ընդառաջ փեսային։ Եւ հինգ ի նոսանց էին իմաստունք, և հինգ յիմարք։ Զի յիմարքն առեալք զլամպարսն, զոչ առին ինքեանց զիւղ։ Իսկ իմաստունքն առին զիւղ ի սրինգսն իւրեանց։ Եւ զի դանդաղեաց փեսայն, նրեցան ամենեքին և քնեցին։ Եւ զի կէս գիշերն եղեալ էր, աղաղակ եղեալ է՝ ասելով. Ահա փեսայն գայ, ելանեք ընդառաջ նորա։ Ապա յարեան ամենայն կուսանքն, և պատրաստեցին զլամպարսն իւրեանց։ Եւ յիմարքն ասացին իմաստունս՝ Տուք մեզ ի ձերոյ զիւղէ, զի զլամպարս մերս մարեալք են։ Պատասխանեցին իմաստունքն՝ ասելով. Զի մի գուցէ ոչ բաւականանիցի մեզ և ձեզ, գնացարուք առ վաճառողսն, և գնեցարուք ձեզ։ Եւ զի գնային գնել, եկն փեսայն, և որք պատրաստ էին, մտին հետ նորա ի հարսանիս։ Եւ դռնեն փակեցաւ։ Ապա եկին և մնացեալ կուսանքն, ասելով. Տէր, Տէր, բա՛ց մեզ։ Եւ պատասխանեաց նոցա ասելով. Ամէն ասեմ ձեզ, զի ոչ գիտեմ զձեզ։ Արդարեւ զի ոչ գիտանիք զաւուրն, ոչ զժամն։

—«Բերգրան» ամսագրի 2000 թվականի մարտի 15-ի համարից։

ԺԱՄԱՆ ԴԱԺՈՏՄՈ

Տիեզերք

Ի՞նչ է նշանակում մեր մասնակցությունը։ Ինչպես ասում է վիպասանը՝ «Ամենայն ինչ ունի իր ժամանակը։ Ամենայն գործ ունի իր ժամանակը։

հրաւիրվեց ճաշի Իլդիզ-Քիոսկ, իսկ յետոյ ընդունվեց ոնկնդրութեան սուլթանի մօտ։ Զրանցքներով անցնելու հարցի վերաբերութեամբ ռուսաց դեսպանութիւնը յայտնեց, որ չորս նաւեր, որոնց թոյլատրված է անցքը, չեն պատկանում զինուորական նաւատորմին։ Բ. Դրան չրջաններում այն կարծիքն ունեն, որ այդ գործի վերաբերեալ տուած խոստմունքները պէտք է կատարվեն։ Ասում են, որ Մօնաստիրի և Ուսկիւբի վալիները պաշտօնանկ են եղած։ Ըէժիմի փոփոխութեան նշան համարվում են խորհրդակցութիւնները Իլդիզ-Քիոսկում եւրոպական բոլոր վալիներին փոխելու վերաբերմամբ։ Լուր է պտտում, թէ սպասվում է մինիստրութեան փոփոխութիւնը։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Սենատի յանձնաժողովը հաստատեց զեկուցում արևմտեան կիսագնդի ընդհանուր միջազգային միջնորդ դատարանի մասին։

ԱՍԽԱԲԱԴ։ Դեկտեմբերի 25-ին, առաւօտեան 11 ժամին, Անդիժանում կրկին զգացվեց երկրաշարժ։ Զօրեղ ուղղաձիգ հարուած զգացվեց. չինութիւններից աղիւսներ էին ընկնում. մարդկանց հետ դժբաղդութիւններ չեղան։

Կ. ՊՕԼԻՍ։ Բ. Դուռը ընդունեց միջնորդ քննութեան կոմպրոմիսը արևելեան երկաթուղու գործի վերաբերմամբ։

ՎԻԵՆՆԱ։ Polit. Correspondenz» իմացաւ, որ Սարաֆով գնում է Պարիզ՝ պարզելու համար փոխառութեան վերաբերեալ դաշնագրի հակասող բացատրութիւնները։ «Neue Freie Presse» հաղորդում է, որ զինուորական վարչութիւնը զբաղված է զինուորագրութեան երկամեայ ժամանակամիջոց մտցնելու հարցի ուսումնասիրութեամբ։ Հարցը սկզբունքով դեռ ևս չէ վճռված։

ՄԱԴՐԻԴ։ Գեներալ Գաչալիսասի վերադարձաւ Ֆէց վիրաւորված։ Սուլթանը հրամայեց կալանաւորել նրան, որպէս պարտութեան գլխաւոր յանցաւորին։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

„ԱՐԱՔՍ“
ՊԱՏԻ ԵՒ ԾՈՑԻ ՕՐԱՑՈՑՑՆԵՐ
1903 թ. համար։

Պատի օրացոյցը իր մէջ պարունակում է Ե. հայերէն եւ ռուսերէն օրացոյցներ, հայերէն եւ ռուսերէն տառերով. իսկ ծոցինը ունի լիակատար եւ շատ հետաքրքիր յաւելուած։

Մի հատ պատի եւ մի հատ էլ ծոցի օրացոյց գնողը կը ստանայ մի օրինակ «Ծոցի երգարան» նուէր։

Պատի օրացոյցը արժէ հատով 50 կոպէկ, դումարով 35 կոպէկ։ Ծոցինը—հատով 20 կոպ., դումարով 15 կոպէկ։

Դիմել՝ Александрополь, Эрив. губ. Типографія Саноянца и Степаняница. 19—20

Թիֆլիսի վաճառականական աւագը և նրա օգնականը խնդրում են Թիֆլիսի վաճառականներին չորս բերել ընդհանուր ժողովի, որ պէտք է տեղի ունենայ կիրակի, ամսոյս 29-ին, առաւօտեան ժամի 11-ին, վաճառականների աւագի դրասենեակում, Սօլօլակ, Լերմոնտովսկի փողոց, № 2։ Զբաղմունքների առարկաները.—1) ընտրութիւն այն անդամների, որոնք պէտք է մասնակցեն 1903 թուականից սկսած Թիֆլիսի կազեննի պալատի ընդհանուր նիստերին։ 2) Ընտրութիւն անդամների, որոնք չորս տարվայ ընթացքում պէտք է մտնեն Թիֆլիսի կազեննի պալատի քաղաքային հարկաբաժանման խորհուրդների կազմի մէջ։ 3) Ընտրութիւն այն անդամների, որոնք պէտք է մտնեն Թիֆլիսի առևտուրի և մանուֆակտուրայի կոմիտէի կազմի մէջ։

1—1

Թիֆլիսի Ժողովարան

Երեքշաբթի, դեկտեմբերի 31-ին, տեղի կունենայ

ԴԻՄԱԿԱՀԱՆԴԷՍ

ընդունված կարգով։ 1—3

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ

Երկուշաբթի, դեկտեմբերի 30-ին

Հայոց դրամատիկական ընկերութեան խումբը կը ներկայացնէ

I

ՄՕՆՆԱ-ՎԱՆՆԱ

Դրամա 3 գործող. հեղ. Մ. Մետերլինկի թարգմ. Տ. Յովհաննիսեանի։

II

ՓԱՍՏԱԲԱՆԻ ՄՕՏ

Վոդեվիլ 1 գործ. փոխադր. Դ. Տէր-Դաւթեանի

Մասնակցում է ամբողջ խումբը

Սկիզբն է 8 ժամին

1—2 Ռեժիսեօր՝ Ե. Աբէլեան

ԳՈՒՏՏԷՆԲԷՐԳ

գրախանութում վաճառվում են՝

Բժ. Ա. Բուդուղեանի հեւանեալ գրքերը

1, Առողջ հոգին առողջ մարմնի մէջ. . 10 կ.
2. Դեղձախտ (զօլոտուխա) : : . . 10 »
3. Ո՞վ է յանցաւորը. . . , . . . 15 »
4. Կարիք և բարեգործութիւն . . . 15 »
5. Ժառանգականութիւն և դաստիարակութիւն . . . . . , 15 »
6. Մանկավարժական համառ. զրոյցներ. 15 »
7. Մարմնամարզութիւն (25 պատկեր.). 25 »
8. Առողջապահական նուէր նորատի կանանց . , ... 20 »
9. Կինը և տղամարդը . . . . . 15 »
10. Վիրաբուժական հիւանդութիւն և օպերացիա . . . . . 5 »
11. Ի՞նչ է կաշու հիւանդութիւնը . . 15 »
12. Երիտասարդութիւն և ծերութիւն . 15 »
13. Առողջ ու հիւանդ երեխայի ոգին . 20 »
14. Ուղեղի սիֆիլիսը (գլխի և ողնաշարի) 20 »

ՊԱՏՐԱՍՏ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

1) «Քուն և երազ», 2) «Ստամոքսի հիւանդութիւնները» (թարգմ.)։ 3) «Իրաւունք և կռիւ», 4) «Անոտիապաչտութիւն». 5) «Բնութեան ոյժը, ինչպէս բժիշկ». 6) »Երեխաների բնաւորութիւնը»։

Այս վեց գրքոյկներից գոյացած ղուտ արդիւնքը կուղարկվի Պարսկաստանում բացվելիք «Նալբանդեան-Պատկանեան գիւղատնտեսարհեստագիտական դպրոց»-ի օգտին։

Դիմել՝ Тифлисъ. Книжный магазинъ „Гутенбергъ“, Лорисъ-Меликовская ул.; № 11. Г. Галустяну. 1—3

Լոյս տեսաւ

ԳՐԻԳՈՐ ԶՊՆՇԱԵՆ

ՌՈՒՍ ՄԱՄՈՒԼԻ ԷՋԵՐՈՒՄ։

Հանգուցեալի պատկերով։ Գ. քահ. Մկրտումեանի։ Գինը 35 կ.։ Դիմել—Գուտտէնբէրգ և կենտրոնական գրավաճառանոցներին։

1—5

Տօներին երեխաներին ընծայելու համար, լոյս տեսան ԷՄՄԱՆՈՒԷԼ քահանայի

ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐԸ

(15 պատկերով, 72 երես)

Առանց կազմի—50 կ., գումարով 40 կ., կազմով—75 կ., գումարով 60 կ.։

МОСКВА, свящ. Э. Назарьянцъ.

ТИФЛИСЪ, Центральная книжная торговля. Հեղինակին դիմողները ճանապարհածախս չեն վճարում։ 6—6

Открыта подписка на 1903 годъ
НА ГАЗЕТУ

„Тифлисскій Листокъ“

(ГОДЪ ИЗДАНІЯ XXVI-й)

Въ 1903 году, какъ и раньше, газета будетъ выходить ежедневно, заключая въ себѣ слѣдующіе отдѣлы и подъотдѣлы: I. Дѣйствія и распоряженія правительства. II. Телеграммы отъ собственныхъ корреспондентовъ и „Россійскаго телеграфнаго агентства“. III. Статьи по общимъ краевымъ вопросамъ, а также по вопросамъ городской жизни и городского самоуправленія. IV. Внутреннія извѣстія. V. Иностранныя извѣстія. VI. Мѣстный отдѣлъ (хроника тифлисской жизни и другихъ мѣстъ Кавказа и Закавказья). VII. Корреспонденціи изъ разныхъ мѣстъ Кавказа (отъ нашихъ корреспондентовъ). VIII. Злободневные фельетоны. IX. Судебный отдѣлъ. X. Письма читателей. XI. Обзоръ печати (общей и кавказской). XII. Фельетоны (городской, обозрѣніе кавказской жизни, популярно-научный, историческій, беллетристика, иностранной и внутренней Общественной жизни, журнальное обозрѣніе и др.) XIII. Театръ и музыка, XIV. По Россіи. XV. Смѣсь. XVI. Справочный отдѣль и объявленія.

По мѣрѣ надобности будутъ выходить отдѣльныя **„Иллюстрированныя прибавленія.**

По понедѣльникамъ подписчикамъ будутъ разсылаться телеграммы съ правочнымъ отдѣломъ и объявленіями.

ПОДПИСНАЯ ЦѢНА: Съ доставкой Тифлисѣ: на годъ 5 р., на 6 мѣс.—3 р. на 3 мѣс.—1 р. 75 к., 1 мѣс.—75 к.; Съ пересылкой иногороднимъ: на годъ—7 р., на 6 мѣс—4 р., на 3 мѣс.—2 р. 50 к., на 1 мѣс.—1 р., Съ пересылкой за границу: на годъ—12 р., на 6 мѣс.—7 р., на 3 мѣс.—4 р., на 1 мѣс.—1 р., 50 к.

Подписка принимается на любой срокъ, только съ 1-го числа каждаго мѣсяца исключительно въ конторѣ изданія, Головинскій проспектъ, № 3.

ПЛАТА ЗА ОБЪЯВЛЕНІЯ: для Закавказья за мѣто, занимаемое строкой петита: на первой страницѣ—10 коп. и на чствертой страницѣ—5 коп. Объявленія внѣ предѣловъ Закавказья принимается исключительно въ центральной конторѣ Торговаго Дома Л. и Э. Метцль и К-°. въ Москвѣ, Мясницкая, д. Ситова и въ отдѣленіяхъ его въ С.-Петербургѣ, на Большой-Морской № 11; Варшавѣ по ул. Краковское предмѣстье № 53, по 24 коп.—на первой страницѣ и 12 коп.—на четвертой страницѣ. 1—3

Շաբաթ, դեկտեմբերի 28-ին

Թիֆլիսի Ժողովարանի դահլիճում

Տեղի կունենայ

ԴԵԿԱԴԵՆՏԱԿԱՆ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

ԿՕՆՏԻԼԻՕՆՈՎ

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՕԳՏԻՆ

Դահլիճը զարդարված կը լինի գեղարուեստօրէն ելեկտրական խաղեր, չատրուանններ, չրջմոլիկ լոյսեր, կիոսկներ և այլն, ղեկավարութեամբ ինժիներ-ելեկտրիկ Ա. Խիթարեանի և մեքենավար պ. Կապլանսկու։

Տիկիններից խնդրվում է լինել դեկադենտական չրջազգեստով կամ գոնէ դեկադենտական սանրուածքով, իսկ պարոնները լինելու են դեկադենտական փողպատով։ Հակառակ դէպքում թէ տիկինները և թէ պարոնները ենթարկվում են 50 կոպէկ տուգանքի։ Զգեստասենեակում տիկինների տրամադրութեան տակ կը լինի՝ պարիկմախեր պ. Վարդանեան և մի կարող կին։

Սկիզբն է երեկոյեան 9½ ժամին։

Տոմսակի գինն է 2 ր. 50 կոպէկ, բարեգործական տուրքը միասին։ Տոմսակները վաղօրօք կարելի է գնել երեկոյթի կառավարչուհի իշխ. Մ. Թումանեանի մօտ (Барятинская № 8) և ընկերութեան գրասենեակում (Армянскій базаръ, домъ Кредитнаго Общества) մուտքը բակից։

(15, 18, 22, 25 և 28-ին) 5—5

Թիֆլիսի Կենտրոնական Գրավաճառանոցում

ծախվում են հետեւեալ նոր հրատարակութիւնները

ԱՀԱՐՈՆԵԱՆ Ա., Խեղճերը (իրական կեանքից հիւսված), Թիֆլիս, 1902 թ. գ. 1 ր.
ԱՐԾՐՈՒՆԻ Վ. բժ., Նորածին երեխաների հիւանդութիւնները, Թիֆլիս 1902 թ. գ. 5 կ., նաև սրա նախորդ բժշկական գրքոյկները։
ԳԷՈՐԳԵԱՆ Բ. եպ., Խորենացուն Խորենացով պէտք է հասկանալ, հատ. Բ., Թիֆլիս, գինն է 1 ր., այս գրքի Ա. հատորը 50 կ.
ԳՐԻԳՈՐԵԱՆ ԳՐ. ա. ք., Սոխակ Հայաստանի, ազգային լիակատար երգարան, Ե. տիպ, Բաղու, 1902 թիւ, գինն է 1 ռուբլի 20 կ.
ԽԱՂԱԹԵԱՆ Բ., Մի կարծիք հայ նախարարութեանց ծագման մասին, Պարիզ, 1902 թ. գ. 50 կ.
ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ Տ., Հայ ժողովրդական հէքիաթներ, 9-րդ գիրքը, Թիֆլիս, 1902 թ. գ. 50 կ., ծախվում են նաև 8, 7 և 6-րդ գրքերը։
ՇԱՀՐԻԱՐ, Զհու դ-Քուչան, վէպ Պարսկաստանի կեանքից, Թիֆլիս, 1902 թ. գ. 1 ր.
ՋԵԽՕՎ Ան., Դիմակ, թարգմ. Յար. Եսայեանի, Թիֆլիս 1902 թ. գ. 5 կ.
ՋՕՊԱՆԵԱՆ Ա., Նահապետ Քուչակի դիւանը, Պարիզ, 1902 թ. գ, 1 ր. 50 կ.
ՋԱՎԱԼԵԱՆ Կ.-ի փոխադր., Պատուաւորներից մէկը, կոմէդիա 1 արար. Թիֆլիս 1902 թ. գ. 15 կ.
ՍՈՒՎՕՐՕՎ Ն. պրոֆ., Եկեղեցու և պետութեան յարաբերութիւնները, ռուս. թարգ. Պետրոս Տէր-Յարութիւնեան, Վաղարշապատ. 1902 թ, գ. 30 կ.

Դիմել՝ Въ Тифлисъ, въ Центральную Книжную Торговлю. 3—4

Ֆինանսների նախարարութեան իրաւասութեան տակ գտնվող

ՀԱՐՈՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

Հեղինակ «Առեւտրական, գործարանական եւ նաւթարդիւնաբերութեան հաշւապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների նախարարութեան ուսումնական բաժնի կողմից ընդունված է իբրեւ օժանդակ ձեռնարկ առեւտրական դպրոցներում

ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Երկու տեսի անձանց՝ գործնական ձեւով հաշւապահութիւն 4 ամսում։

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

1) Իրական կրկնակի հաշւապահութիւն արդիւնագործութեան բոլոր ճիւղերի վերաբերեալ, վաճառականական, բանկային, յանձնարարական, գործարանական, նաեւ նաւթարդիւնաբերական եւ նաւթագործական հաշւապահութիւն։
2) Առեւտրական թուաբանութիւն։
3) Առեւտրական թղթակցութիւն։
4) Մուրհակային եւ առեւտրական օրէնքներ։
5) Վայելչագրութիւն եւ ուղղագրութիւն ամենատարբեր ձեւագրի։

Ընդունելութիւն ամեն օր։ Պարապմունքները սկսվում են 1903 թիւ Յունվարի 15-ից պարբերաբար ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ՝ 60 ռուբլի վճարով ամբողջ դասընթացքի համար։

Դասընթացքը ուսարտղներին տրվում են, ֆինանսների նախարարութեան թոյլատրված ծրագրի համաձայն, ատեստատներ։

Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին՝ Թիֆլիսում, Н. В. Абраамяну, Николаевская ул. № 46, ամենայն օր։ Ծրագիրն ուղարկվում է ձրի։

Վերեւում յիշված ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պոստի ծախս վճարելու։ Գինն է 3 ր. 50 կոպէկ։ (կ. ե. ա.) 8—25

Дозволено Цензурою, Тифлисъ, 27 Декабря 1902 г.

Электропечная Груз. Издат. Т—ва. Б.-Ванкская ул.